ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5.1.2-3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. դեկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում» 5.1.2 ենթամիջոցառման** իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության խորհրդական
Հ.Սահակյան		ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- 2024 թվականի հուլիսի 26-ին «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի հետ կնքված N318-24 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել փոփոխություն:

Լսեցին՝

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ն 2024 թվականի դեկտեմբերի 2-ին ներկայացրել է գրություն (կցվում է) առ այն, որ կազմակերպությունը խնդրում է կատարել համապատասխան փոփոխություն հուլիսի 26-ին «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի հետ կնքված

N318-24 պայմանագրի հավելված 2-ով ներկայացված ֆինանսական նախահաշվի 2.13-2.19 կետերում: Նախահաշվի կետերում փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է միջոցառման կազմակերպման նպատակով վերջնական ընտրված մատակարարների և ծառայությունների արժեքներով, որոնց մի մասը տարբերվում է դրամաշնորհին դիմելու ժամանակ ներկայացված արժեքներից:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է կատարել համապատասխան փոփոխություններ կնքված պայմանագրում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Ընդունել «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի առաջարկը՝ պայմանագրի հավելված 2-ով ներկայացված ֆինանսական նախահաշվում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

2. Պատրաստել «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի հետ 2024 թվականի հուլիսի 26-ին կնքված N318-24 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծ և առաջարկել ընկերությանը կնքել նշված համաձայնագիրը:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Հ.Սահակյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____